

# ԿԱՍԿԱԾ ԵՒ ՏԱՐԱԿՈՅՍ

DOUBT AND SCEPTICISM

ԱԼԴԵՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

1997

## Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Կասկածիլ՝ հոգեկան տատանում և վարանում է դեպքի մը կամ հարցի մը իսկութեան և ճշմարտութեան համար: Հաւատքի, հոգեկան որոնումի մէջ, կասկածը կրնայ իր բարի նպաստը բերել ոչ միայն հաւատքին՝ այլ նաեւ անհաւատութեան...: Անհաւատութիւնը՝ հաւատա՛լ է ժխտակա՛ն իսկութեան: Անհաւատութիւնը՝ *չհաւատայ* է, այլ դրական (Աստուծո՛յ) և Գերբնականին հաւատալու փոխարէն, Անոր *չգոյութեա՛ն* հաւատալն է:

Տարակոյսը՝ երկմտութիւն, թերահաւատութիւն, կամ երկու մտքի վրայ կաղալ է, այլ խօսքով, անստուգութիւն: Այս համեստ գրեցկը կը ձօնեմ այն սիրելի հայրենակիցներուս, որոնց պապենական անթառամ հաւատքը տեղատուութիւն ունեցած է կեանքի անախորժ և դաժան յորձանքներէն:

Աղօթող եմ, որ կասկածի ու տարակոյսի ենթարկուած հայկակներ՝ իրենց պլպլացող հաւատքը վերատեսութեան ենթարկեն իրենց օտարական դարձած 17 դարերու Լոյս հաւատքին: Նկատելով իրենց նահատակները ու անոնց հաւատքով երկնուած Աստուածը:

Հայր, եթէ հաւատալէ՛ ալ դադրի, հաւատացեալ մը ըլլալէ չի դադրիր. մինչեւ որ չ՛ուրանայ իր Տէրը և Աստուածը:

Հոկտեմբեր 8, 1993  
Հալիպրոթըն, Գանատա  
Ա. Նորատունկեան

# ԿԱՍԿԱԾ ԵՒ ՏԱՐԱԿՈՅՍ

**Ս**արդ արարածը ինչո՞ւ կը կասկածի և իր հոգւոյն մէջ ինչո՞ւ

տարակոյսներ կը ծնին հանդէպ անյերելի և անայլայլ իրականութիւններու: Տարակուսանքի զոհերը փնտռելու չե՛նք միայն տկարամիտ, վախկոտ և սկսնակ ուխտաւորներու մէջ, այլ կասկածն ու թերահաւատութիւնը իւրաքանչիւր իրենց զոհերը, նաեւ առաջնահերթ քաջերէ և անվեհեր դիւցազուններէ:

Աշխարհի հոգեբանութեան մէջ տիրակալող, գերակշիռ վտանգը անյայտ ապագայի մը վախն է: Մաջեցուցիչ և ջլատիչ սարսափի անստուգութիւնը, աւելի զարհուրելի է քան մահը: Երբ վախը մուտք գործէ մարդու հոգեկան ապարանքը, իր առաջին դերը կ'ըլլայ ցանել կասկածի սերմեր հաւատքի արգասաքեր հողին մէջ: Խոր ու վտանգաւոր կացութեան մը ախտանիշը վախն է, որ կ'առաջնորդէ ենթական կասկածի և տարակուսանքի խոր մթնոլթեան և ջփոթնոլթեան:

Հետազօտենք տարակոյսի և կասկածի զոհերը, որոնք հաւատքի պայքարին մէջ թէև ստացան մեծ կամ փոքր վէրքեր, սակայն ծունկի չեկան և չպարտուեցան տարակոյսի հարուածներէն և պատուհասներէն:

Յիսուս Քրիստոս, "Լերան Քարոզին" մէջ, *կարեկցութեան* հոգիով ու քաղցրութեամբ կը մօտենայ թերահաւատներուն և կը ջանայ լուսաւորել և փարատել անոնց կասկածը և տարակոյսը, ըսելով.

***«Նայեցէ՛ք երկնքի թռչուններուն... նայեցէ՛ք վայրի ջուջաններուն՝ ինչպէ՛ս կ'ածին... Աստուած այդպէ՛ս կը հագուեցնէ, որչա՛փ աւելի եւս ձե՛զ, թերահաւատներ»***--Մատթ. 2:30:

Յովհաննէս Ակրտիչի աշակերտները, որոնք տեսակ մը մրցակիցներն էին Յիսուս Նազովրեցիի աշակերտներուն, մօտեցան Նազովրեցի Հրաշագործին՝ որպէս պատգամաւորները իրենց վրդովեալ վարդապետին:

Յովհաննէս՝ անապատական Ակրտիչը այդ միջոցին կալանաւորն էր Հերովդէս թագաւորին: Ան անապատի անծայրածիր հորիզոնի կախարդական մայրամուտի գեղեցկութենէն զրկուած նետուած էր խաւար գնդանի մը խուցը: Խաւար մթնոլթան տուերները աղօտած էին այս անվեհեր անապատականին հոգին, որ Հին Առակարանի վերջին մարգարէն կը ճանչցուի: Մենակեաց Յովհաննէս, որ եկած էր Յորդանան գետի եզերքը բանալու նոր հորիզոն մը մարդկային հասկացողութեան մէջ և աւետելու սպասուած Փրկիչը աշխարհի,

այժմ դարձած էր բանտարկեալը հեշտասէր ու նախանձու ձերովդէս արքային:

Խիզախ ու անվեհեր հրեղէն անապատականը, քարոզիչը ապաշխարութեան և արդարութեան, պոռթկացած էր երկրի արքային անբարոյ և անիրաւ կենցաղավարութեան դէմ, և այժմ կը տատանէր թերահաւատութեան մշուշապատ և օրհասական մթնոլորտին մէջ: Ան ականատես վկան եղած էր Աղաւնակերպ Սուրբ Հոգւոյն, և անոր ականջներուն հնչած էր աստուածաբարբառ Պատգամը, ըսելով.

***«Առիկա՛ է իմ սիրելի որդիս, որուն ես հաճեցայ»:***

Սակայն իսաւար մթութիւնը ոչ միայն պատած էր Յովհաննէս Ակրտիչին խուցը, այլ նաեւ անոր հոգեկան ներաշխարհը: Անոր հաւատքն ու վստահութիւնը առ Աստուած խախտած էին տրամաբանութեան խարխիւէն: Ինչո՞ւ, որովհետեւ եթէ Յիսուս Փրկիչն էր իր ազգին, կրօնիին և մշակոյթին, ինչո՞ւ արդեօք չէր գար և Իր հրաշագործ գօրութեամբ չէր ազատեր Իր կարապետ պատգամախօսը: Անապատականին աղօս տրամաբանութիւնը առաջնորդած էր զինք կասկածի և տարակոյսի յորձանուտը:

Բարեգութ և մարդասէր Նազովրեցին անմիջապէս ըմբռնեց Յովհաննէս Ակրտիչին մարդկային տկարութիւնները որպէս անոր հողայնութեան արդիւնք, որովհետեւ.

*«Տե՛ս ինձ՝ Բահանայապետ մը՝ որ մեզի նման փորձուած է ամէն բանի մէջ, բայց առանց մեղքի»* -- Եբր. Դ. 15:

Յովհաննէս Ակրտիչ, յուսահատական սպասումէ և անպատասխան աղերսանքներէ յետոյ կանչած էր իր ամենավստահելի աջակերտներէն ոմանք ուղղելու համար հարցում մը Յիսուսի, որ պիտի յայտնաբանէր իր կասկածի և տարակոյսի արտայայտութիւնը, որ հետեւանքն էր հե՛ք անապատականին երկարամեայ մղձաւանջին:

*«Յո՞ւն ես ան՝ որ պիտի գար, թէ ուրիշի մը սպասեմք»* -- Մատթ. ԺԱ. 2:

Անկեղծ և ուղղամիտ հարցում մը, սակայն ծանրաբեռնուած կասկածի և թերահաւատութեան խայթոցով: Մարգարէի մը անվայել, մանաւանդ ականատես կարապետ դեսպանի մը: Յիսուս Քրիստոս կորսուածը և կործանուածը վերականգնելու և վերակերտելու համար եկաւ աշխարհ ու ո՛չ դատապարտելու գանոնք: Յիսուս, փոխանակ չարախօսելու կամ զրպարտելու Յովհաննէս Ակրտիչը, կը մեծարէ Իր նախակարապետ վկան ու կ'ըսէ.

**«Ի՞նչ տեսնելու ելա՞մ անապատը, հովէն շարժուող եղէ՞գ: ...մարգարէ՞, այո՛, կ'ըսեմ ձեզի, աւելի քան մարգարէ. որովհետեւ ա՛ն է այն մարդը, որուն մասին գրուած է. "Ահա ես կը դրկեմ իմ պտղագամուրս բու առջեւէդ" ... Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կիներէն ծնածներու մէջ Յովհաննէս Ակրտիչէն աւելի մեծը չէ ելած»--Մատթ. ԺԱ. 7-11:**

Որքա՞ն սորվելիք ունի եկեղեցին իր բոլոր հաւատացեալներով մէկտեղ վերոյիջեալ անմար խօսքերէն, որոնք ուղղութիւն կու տան հաւատացեալի մը դաստղութեան: Ի՞նչ դժբախտութիւն է տեսնել հաւատացեալներ, որոնք անմտօրէն, անխորհուրդօրէն կը գրպարտեն կը դատապարտեն և կը կախակայեն ոչ միայն թերահաւատները, այլ նաեւ *իրենց պէս չհաւատացող* սակայն Յիսուս Քրիստոսը սիրողները:

Հոգեհմայ Յիսուս որքա՞ն հանդուրժող և համբերող հոգի ցոյց տուաւ փարիսեցիներուն հանդէպ, որոնք Իր հակառակորդներն էին, ինչպէս և հասարակ ժողովուրդին՝ որ անմիտ էր: Հարուստներուն՝ որոնք դրամապաշտ էին և Իր աջակերտներուն՝ որոնք փառամոլ էին: Մենք, որ մակագրուած ենք Իր յաւերժական սուրբ Անուսով, որքա՞ն կը նմանիմք Իրեն, որքա՞ն ցոյց կու տանք Իր Դիմագիծը մեր առօրեայ գործի և առեւտուրի ընթացքին: Մեր անհատական, եկեղեցական և ազգային յարաբերութեան մէջ որչա՞փ ուղղամիտ ենք, որչա՞փ հանդուրժող ու որչա՞փ երկայնամիտ:

Երկրորդ թերահաւատութեան միջադէպը որ կը տողանցէ մեր տեսանելիութեան առջեւ՝ Պետրոս աջակերտին ծովամոյն ըլլալն է: Անմահարար Հաց Յիսուս կերակրած էր 5000 հոգիներ, որոնք հաւաքուած էին զանազան գիւղերէ, աւաններէ և հեռաւոր տեղերէ: Ոմանք բերած էին իրենց հիւանդները, դիւահարները և արկածեալները գտնելու բժշկութիւն և հոգեխաղաղութիւն:

Մինչեւ մայրամուտ և աւելի ուշ, հրաշագործ Մարգարէն կը կարեկցի, կը միխիթարէ, կը բժշկէ ու կը բաջալերէ բոլոր անոնք, որոնք հիացմունքով չեն ուզեր բաժնուիլ հոգեպարար ու հոգեբարբառ Յաւերժաւանդ Յիսուսէն: Մով՞ը սկսած է տարածուիլ հովիտներու մէջ, սակայն լեռներու գագաթները տակաւին լուսաւոր են: Հօրմէն Անբաժանելին՝ կը մագլցի դէպի լուսաւոր Գագաթը ոչ թէ լեռան, այլ անստուեր ներկայութեան, աղօթելու և վերագօրանալու հոգեպէս: Մինչեւ առաւօտեան ժամը չորս, Յիսուս յարաբերութեան ու հաղորդակցութեան աղերսարկուն է մարդկութեան համար: Առաւօտեան կանուխ ժամերուն երբ կը բաժնուի Իր Հօր հաղորդակցութենէն, կը տեսնէ Իր հաւատարիմ աջակերտները, որոնք պայքարի մէջ են կատարի ալիքներուն դէմ: Անվարան, Յիսուս կ'ուղղուի դէպի ծով ու կը ջանայ օգնութեան հասնիլ աջակերտներուն: Իր աճապարանքին մէջ, Յիսուս չէ նկատած անգամ, որ Իր

նոսերը կը քալեն ջուրի վրայ ու ո՛չ թէ ցամաքի:

Յիսուս Զրիստոս ենթակայ չէ՛ նիւթի՛ ու թանձրացեալի զօրութեան, որովհետեւ Ի՛նքն է Արարիչը նիւթին: Աշակերտները յոգնած են մահառելէ հովին դէմ, ալիքներուն դէմ ու կորսնցուցած իրենց ճանապարհի ուղղութիւնը: Յանկարծ այս բոլոր յոգնութեան և անստուգութեան մէջ կ'ապշին ու կը զարհուրին երբ կը տեսնեն Լուսեղէն ուրուական երեւոյթ մը, որ խորհրդաւոր կերպով կը մօտենայ իրենց, աղջամուղջի մէջէն: Երբ Զարմանքի և սարսափի մատնուած, ջուարումի և զարհուրանքի մէջ են, կը լսուի քաղցրահունչ և ծանօթ ձայն մը, որ կ'ըսէ իրենց.

### **«Արտագնդուեցէ՛ք, ե՛ս եմ, մի՛ վախնաք»:**

Յիսուս Զրիստոսի Մարդեղութեամբ, Աստուծոյ պատգամը ստացաւ նոր բնոյթ. *«Մի վախնաք՛, յի՛, «Ես եմ», «Ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի կատարածը».*

Աշակերտները քաջալերուած իրենց յաղթական և հրաշագործ Վարդապետին անակնկալ հանդիպումէն, կը վերստանան իրենց ինքնութիւնը և ապահովութիւնը: Մինչ այդ, արկածախնդիր, առաջնահերթ և քաջակորով Պետրոս աշակերտ կը պատասխանէ ու կ'ըսէ Լուսեղէն Մօտեցողին.

*«Տէ՛ր, եթէ դու ն ես՝ հրաման տուր ինձի ջուրերու ն վրայէն քեզի գալ».* Անպարտելի Յիսուս կ'ըսէ. **«Եկուք»:**

Պետրոս կ'իջնէ նաւէն ու ջուրերու վրայէն քալելով կ'ուղղուի դէպի Անստուեր Լոյսը: Ծառ հաւանական է այդ պահուն հպարտանքը Պետրոսը կը մղէ որ իր աչքերը փոխանակ սեւեռեալ պահելու Յիսուս Զրիստոսի վրայ, դարձնէ իր ընկեր աշակերտներուն ըսելու անոնց *«նայեցէ՛ք ինձի, ե՛ս ալ կը քալեմ ջուրերու վրայ».* Հազիւ աչքերը դարձուցած է ետ, դէպի աշակերտները, ցոյց տալու իր արիութիւնը, Պետրոսի աչքերուն առջեւ կը սողանցեն վիթխարի ալիքներ և ականջին կը սուլէ մրրկահովը:

Այն բոլորին երբ ինք պիտի խլէր հուռաներ և ծափեր և պարծանք, հպարտանքի մղումը կ'անջատէ Պետրոսը իր Տիրոջ զօրութենէն: Թշուառ Պետրոսի ոսկերը փոխանակ քալելու ջուրերու վրայ կը սկսին սուզուիլ ջուրերու մէջ: Խոր ու մութ լուրթեան մէջ կը լսուի աղաղակը յաղթահարուած ու պարտուած փառամոլութեան գոչիւնը, որ կ'ըսէ.

### **«Տէ՛ր, փրկէ գիս»:**

Տէր և Փրկիչ Յիսուս անմիջապէս կ'երկարէ Իր բարեգութ Ձեռքը, կը

բունէ կէս ընկղմած Պետրոսը ու կ'ըսէ քաղցրութեամբ.

**«Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցար»:**

Պետրոս և իր վերափոխիչ Տէրը կ'ելլեն նաև ու հոգեհոսն քամին կը հանդարտի: Պետրոս, արտաֆնապէս թրջած ու ներֆնապէս ամօթահար իր պարտութեան պատճառաւ, կը սորվի թէ իր առաքելութեան ընթացքին, պարտաւոր է *աչֆէրը սեւեռեալ պահել անպարտելի Զրիստոսի* վրայ:

Թերահաւատութեան երրորդ պարագայ մը, որ ցոյց կու տայ դէպքերու հոլովոյթը և դէմքերու արտայայտութիւնը, երբ անհուն Զգաստութիւն Յիսուս կը յանդիմանէ 12 աշակերտները ծովագնացութեան մը ընթացքին: Այս իրական եղելութիւնը դէպք մըն է, ուր բոլոր աշակերտները դեր ունին և բոլորն ալ նոյն թերացումը կը գործեն:

Հրաշագեղ մայրամուտը՝ հայրենի լեռները կ'ոսկեզօծէր երբ աստուածայայտնիչ Յիսուս Վարդապետ կ'արձակէ ժողովուրդները, երկար քարոզութենէ և բազմաթիւ հրաշքներ գործելէ վերջ: Ապրող Խօսքն ու աշակերտները կը մտնեն նաև ու Լուսեղէն Ձեռքերը նշան կ'ընեն որ նաև ծովակին դիմացի եզերքը տանին:

Աշակերտները կը բանան առագաստը և նաև կը յանձնեն ամառնային գեփիւռին որ կարծես պատրաստ էր կատարելու ձկնորսներու կամքը: Կեանք բաշխող Աստուածորդին, օրուան երկարատեւ ծառայութենէն և ուժի սպառումէն յոգնած և ծովու խաղաղութենէն հաղորդուած, գլուխը կը դնէ բարձի մը վրայ հանգստանալու համար:

Սատանան, անապատի իր պարտութենէն կատղած, Յիսուսի ֆնանալը առիթ կը սեպէ ու կը ջղթայազերծէ այնպիսի մրրկահով և մեծ հողմամրրիկ մը, որ ալիքները նաւակին մէջ կը թափին, այն աստիճան որ նաւակը գրեթէ կը լեցուի: Իսկ Հօր Անքնին Ծնունդ, «նաւակին ետեւի կողմը բարձի մը վրայ կը ֆնանար»: Սղեզնած հակառակորդը՝ Սատանան երբ չէր կրցած *դիւ անազիտակաւ*, ծուղակով տապալել Անհուն Զգաստութիւնը, անապատի 40 օրուայ ծովապահութենէն յետոյ, կը փորձէ ծովամոյն ընել Զայն ու Անոր աշակերտները, որոնք կազմակերպուած էին որպէս արդարութեան, իրաւունքի, ճշմարտութեան և սրբութեան բջիջներ գործելու չարին այլասերած աշխարհակալութեան մէջ:

Ծովագնացութեան՝ կեանքի փորձանքներու և փորձութիւններու, վերոյիջեալ պատկերացման մէջ ի յայտ կու գան երկու տարբեր և հակընդդէմ էութիւններ և իրականութիւններ: Մին՝ (աշակերտներ)ը շուարած, ժխտական և յուսահատ, որոնց կ'երեւի *ուրուակաւ* մահը. «*Անա կը կորսուիմ*» աղաղակը թերահաւատութեան: Իսկ անդին հաւատքի և յոյսի տիտան Զրիստոս, աննկատ Իր շուրջը տեղի ունեցող ահաւոր և ճակատագրական աղէտին, «*կը ֆնանայ*»: Յիսուս Զրիստոսի ֆնանալը անփութութիւն և անհոգութիւն նկատուելու չէ՛,

այլ՝ տիրացումը գերբնական գօրութեան:

Յատկանշական և դրական արարք մը, որ գովասանքի արժանի ձեռներեցութիւն մըն է աշակերտներուն համար, արթնցնելն է իրենց մէջ բուն մտած Վարդապետը: Այլաբանական իմաստով՝ *“արթննալ”*: ինքնագիտակցութեան գալ և մեր մէջի հաւատքը, Աստուծոյ ներկայութիւնը, հրահրել է: Կան անհամար հաւատացեալներ, եկեղեցի յաճախող բարեպաշտներ, աշակերտները Մեծ Վարդապետին, որոնց հոգիներուն մէջ Յիսուս *“Գու ն մտած է”*: Հաւատքն ու կրօնքը դարձած են ծէս ու արարողութիւն առանց ազդեցութիւն մը իրագործելու իրենց կեանքի ամենօրեայ խանդավարութեան վրայ: Հաւատքի ջերմեռանդութիւնը չ’ունին, փրկութեան և յաւիտենական կեանքի իրականութիւնը զիրենք չի՛ ներշնչեր, չի ոգեւորեր ու կեանքը դարձած է բեռ ու ծանր տաղտուկ:

Հաւատացեալներ յաճախ կը մոռնան, թէ *“վերջն ու վիշտը, հաւատքն ու փորձն թիւ նր”* նախանիւթեր են արարչական և էտաքրը ծնուցիչ ստեղծագործման: Մարդ փորձութեան կ’ենթարկուի կիրքերու մղումով, բայց կը գսպուի սրամաքանութեամբ և խիղճով: Ոչ թէ Աստուած Ի՛նք կը փորձէ մարդը, այլ Սատանային փորձութիւնը, Աստուած կը փոխակերպէ մարդը մաքրագործող ազդակի:

Մարդ երբ արթնցնէ իր մէջ բնացած աստուածային գօրութիւնը (հաւատք) յայնժամ անկարելի կարծուածը, կարելի կը դառնայ:

***«Եւ Յիսուս, արթննալով, սասանց հովին և ըսաւ ծովուն. Գաղարէ՛, լուէ՛: Եւ հովը դադրեցաւ, ու մեծ խաղաղութիւն տիրեց»***  
--Մարկոս Գ. 39:

Երբ արթնցնենք մեր մէջ Աստուծոյ *կերպարը*, երբ վստահի՛նք Անոր որ մեր Արարիչն է, երբ յանձնե՛նք մեր կամքը Անոր բարի Կամքին, կեանքի խաղաղութիւն և հոգեկան անդորրութիւն պիտի համակէ մեր սրտերը:

Յիսուս Քրիստոսի հրամայական սաստը հովին և ծովուն, ո՛չ թէ տգիտութիւն մը կամ սխալանք մըն էր, այլ՝ որովհետեւ Սատանան այդ պահուն մարմնացած էր որպէս հով և ծովու փոթորիկ: Ինչպէս գաղափար մը, բարի կամ չար, մարմին կը ստանայ մարդ էակին մէջ ու կը փոխակերպէ գայն Անարեկացիի կամ Ճէնկիզ Խանի, նոյնպէս այդ վերոյիջեալ ծովագնացութեան ընթացքին, չարը դարձած էր փոթորիկ և մրրկահով:

Թէեւ Յիսուս Քրիստոս Բաղքութեամբ խօսեցաւ աշակերտներուն ըսելով. *«Ինչո՞ն այդպէս վախկոտ է՞, տակաւին հաւատք չու նի՞նք»*, սակայն ջեջտը խիստ էր ու պահանջկոտ: Պատճա՞ռը, որպէսզի վերոյիջեալ խօսքերը ոչ միայն ձայնալիքներով սփռուին, այլ գրիչով Բանդակուն հոգիի ու սրտի երանքներուն մէջ: Որպէս աշակերտ և աշկերտ Արարչին ծառայութեան մէջ,

խոնարհութեամբ և զղջումի հոգիով ընդունելու ենք թէ՛ գովասանք և թէ՛ սաստ,՝ որովհետև *“Ամէն բարի տուրք և պարգև վերջն է...”*

**«Չըսի՞ բեզի, որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ  
փառքը պիտի տեսնես»--Յով. ԺԱ. 39:**

Մեզի մարմնակից և պատկերակից, բարութեան մարմնացեալ Անհատակամութիւն Յիսուս ալ ունէր մտերմիկ ու սրտակից ընկերներ՝ Ղազարոս և անոր բոյրերը, Մարիամ ու Մարթա: Ամէն անգամ որ Մշտաշող Նազովրեցին ու Իր աշակերտները Բեթանիա գիւղին մօտերը այցելութիւն տային, կը գիշերէին Ղազարոսէնց բնակարանը ուր կը գտնէին յօծարակամ հիւրընկալութիւն և սրտագրաւ բարեկամութիւն:

Հիւրասիրութիւն, ջերմութիւն և անկեղծ բարեկամութիւն յայտնող Ղազարոս յանկարծ կը հիւանդանայ: Մարիամ և Մարթա, ճարահատ ու ջփոթած, լուր կը դրկեն անմահարար Դեղ Մարգարէին, որ գայ և բժշկէ Իր շատ սիրելի բարեկամը՝ իրենց Ղազարոս եղբայրը: Լոյսի և կեանքի Ակնադրիւր Յիսուս, փոխանակ աճապարելու և օգնութեան հասնելու խոոված ու այլայլած ընտանիքին, ինչպէս որ ըրած էր անցեալին Յայրոսի ընտանիքին յարուցանելով անոնց 12 տարեկան պարմանութիւն, կը յետաձգէ Իր այցելութիւնը դէպի Բեթանիա: Յովհաննէս աւետարանագիր՝ իր Վարդապետին անմիջապէս Բեթանիա չ'երթալը սապէս կը պատմէ.

***Երբ Յիսուս լսեց թէ Ղազարոս հիւանդացած է՝  
երկու օր եւս մնաց այնտեղ ուր կը գտնուէր:***

Ինչո՞ւ արդեօք Լուսեղէն Ձեռները որ բժշկած էին բազմաթիւ հիւանդներ, ախտաւորներ և կոյրեր, կը յետաձգէ Իր կարեկցութիւնը և ողորմագին Նայուածքը հիւրընկալ և հաճելի ընտանիքէն: Վերոյիջեալ հարցումը ուղղած են անհամար հաւատացեալներ աղօթքի ճամբով հոգեկան հաղորդակցութեան թելերով հրաջֆներու համատարած Զօրութեան: Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած, քան բացատրել Ձիւնք, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, քան թէ կրնանք երեւակայել Ձիւնք:

Մեր ուղղած հարցումին պատասխանը կը գտնուի նոյն գլխուն 4-րդ համարին մէջ ուր կը կարդանք Յիսուսի անձնագոհ միտքը որ դիւրահասկնալի կը դարձնէ Հայր Աստուծոյ տեսլականը համայն մարդկութեան.

***«Երբ Յիսուս լսեց՝ ըսաւ. “այդ հիւանդութիւնը մահաբեր է, այլ Աստուծոյ փառքին համար է, որպէսզի անով փառաւորուի Աստուծոյ Որդին» --ԺԱ. 4:***

Առանց Աստուծոյ *ռչինչ կրնա*, ընել մարդ, բայց առանց մարդու *ռչինչ կ'ազէ* ընել Աստուած: Աստուծոյ փնտածը անձնանուէր հոգիներ են, որոնք անձնագործուն կ'ուզեն կամակատարները դարձալ բարեգութ Աստուծոյ: Մեր աղօթքները աղերսները կրնան *ռջանալ*, սակայն երբեք անպատասխանի չեն մնար: Երբեմն դրական կերպով չեն պատասխանուիր և երբեմն ալ մեր յուսացածէն աւելի՛ նպաստաւոր և ջանաբեր կը պատասխանուին: Աստուած կը փարատէ մեր մթազնած խաւարը ու կը ծագէ այգալոյսող կեանքի և յոյսի արեգակը:

Մարիամ և Մարթա վշտահար և յուսահատ թաղած էին իրենց միակ եղբայրը Ղազարոս և հիասթափուած կը խորհէին թէ ինչո՞ւ համար իրենց Բարեկամ կարծած՝ Նազովրեցի Մարգարէն անմիջական օգնութեան ձեռք չկարկառեց իրենց եղբօր: Թերահաւատութեան և կասկածի ստուերներու մէջ թաղուած երբ կու լային երկու բոյրերը, Մարթայի լուր սրուեցաւ, թէ Յիսուս կու գայ: «Երբ Մարթա լսեց որ Յիսուս կու գայ՝ Անոր ընդառաջ գնաց, բայց Մարիամ տունը նստած էր»:

Մարթա մշտելով ու հրելով բազմութիւնը կը մօտենայ հրաշագործ Մարգարէին: Ուղեկորոյս հեծեծանքով ու խոովայոյզ ձայնով կը թախանձէ ըսելով. *«Տէ՛ր, եթէ դուն հոս եղած՝ ըլլայիր՝ իմ դրայրս մեռած չէր ըլլար»*:

Մարթա՝ ժամանակը կամրջող Յաւիտենականին ներկայութեան երբ հաւատքի գօրութիւն կը զգենու, կը շարունակէ իր պաղատանքը, յայտնելով հաւատք ու վստահութիւն Յիսուսի և կ'ըսէ.

***«Բայց հիմա ալ գիտեմ թէ, ինչ որ Աստուծմէ  
ուզես, Աստուած կու տայ քեզի»:***

Վերոյիջեալ խօսքերը հաւատքի և յոյսի աստղաշողեր են որոնք կը լուսաւորեն հաւատացեալի մը ներքնակամարը և կը բիւրեղացնեն անոր հոգեմտաւոր տեսանելիութիւնը: Աննկուն հաւատաւոր Մարթայի խոստովանանքը պատճառ եղաւ, որ Յաւերժաւանդ Խորհուրդ Յիսուս՝ Իր սրտի վառարանէն ի լոյս ընծայէ թանկագին մարգարիտ մը, ըսելով.

***«Ես իսկ եմ Յարութիւնն ու կեանքը, ով որ կը հաւատայ  
ինձի, թէպէտ մեռնի ալ, պիտի ապրի. իսկ ով որ կենդա-  
նի է և կը հաւատայ ինձի՝ յաւիտեան պիտի չմեռնի»:***

Յիսուս Զրիստոսի վերոյիջեալ անմահական ճշմարտութեան բացայայտութիւնը անդենականի մասին, հաւատացեալները կը պարտին Մարթայի անխախտ հաւատքին ու անխարդախ սիրոյն: Յարութեան և յաւիտենական կեանքի երաջխիւիքը ստանալէ յետոյ, Մարթա կը վագէ և անմիջապէս կ'երթայ իր բրոջ Մարիամի և կամացուկ մը կ'ըսէ անոր.

**«Վարդապետը եկած է և բեզ կը կանչէ»:**

Մարթայի վերոյիջեալ խօսքերը այնքա՛ն մեծարժէք ու թանկագին են, որ մի միայն հրաւիրեալը կրնայ հասկնալ: Յիսուս Զրիստոսի կողմէ կանչուիլը նշան է հանդիսութեան և ուրախութեան: Յիսուսի հրաւերը *դատաստանի կամ պատիժի համար չէ*, այլ միայն ուրախութեան համար:

Յիսուս տակաւին Բեթանիա չէր հասած, այլ կը գտնուէր այնտեղ ուր Մարթա տեսակցած էր Իրեն հետ: Այն հրեաները, որոնք Մարիամի հետ տունն էին և կը մխիթարէին զայն, երբ տեսան թէ Մարիամ իսկոյն ելաւ ու գնաց՝ իրենք ալ գացին անոր ետեւէն. կը կարծէին թէ գերեզման կ'երթայ, որ այնտեղ լայ, մինչդեռ Մարիամ գացած էր Յիսուսը տեսնելու:

Հասարակութիւնը, ընդհանրապէս, սխալ կը հասկնայ հաւատացեալի մը արարքը կամ խօսքը: Ոչ միայն *սխալ* կը հասկնան, այլ *կ'ազե՛ն* սխալ հասկնալ:

Մարիամ փոխանակ գերեզման՝ մեռելներուն երթալու, գացած էր տեսնել Մեծ Վարդապետը Յարութեան և անվիճելի Իրականութեան: Յիսուս Զրիստոսի Մարդեղութեամբ՝ խաւարը կը փախչի, մէզը կը մեկնի, մատախուղը կը հեռանայ և աղջամուղջը կը սպառի ու մահացածներ կը կենդանանան:

Մարիամ, տխուր բայց ոչ յուսահատ, կ'իյնայ Յիսուսի ոտներուն ու կ'ըսէ տխրաթախիծ ջեշտով մը.

***«Տէ՛ր, եթէ այստեղ եղած ըլլայիր՝  
իմ եղբայրս մեռած չէր ըլլար»:***

Կեանքի բոլոր ոլորտները թափանցող Յիսուս երբ Իր շուրջը կը նայի, կը տեսնէ միայն լաց ու կոծ: Յաւերու դարման եղող Յիսուս փոխանակ բացատրելու Իր յապաղումը, հարցում մը կ'ուղղէ Իր շուրջիներուն, ու կ'ըսէ.

***«Ո՞ւր դրի՛ք զայն»:***

Յիսուս երբ կու գայ գերեզման ու դէմ հանդիման կը գտնուի դաժան մահուան, որ կալանաւորած էր իր սիրելի բարեկամ Ղազարոսը, *Յիսուս Ինքն ալ կը լայ*: Ինչո՞ւ, որովհետեւ կենդանի հաղորդութեամբ Յիսուս կը փոխանցէ Իր պատգամները:

Բոլոր բազմութիւնը միատեղ կու գան գերեզման: Զարայր մըն էր ան և վրան բար մը դրուած, Յիսուս կանգնեցաւ իբրեւ Կամուրջ կեանքի և մահուան անլոյծ խորհուրդին առջեւ ու հրամայեց որ բարը մէկդի՛ ընեն: Մտեալին Բոլոր՝ Մարթայ, ըսաւ Յիսուսի. *«Տէ՛ր, հիմա արդէն նեխած կ'ըլլայ. Բանի որ չորս օրուան է»*: Յիսուս պատասխանեց Մարթայի ըսելով.

**«Զրսի՞ քեզի, որ եթէ հաւատաս՝  
Աստուծոյ փառքը պիտի տեսնես»:**

Մարդկային հաւատին և Յիսուս Քրիստոսի հաւատին տարբերութեան տեսանելիութիւնը՝ մէկը *սահմանաւոր*, իսկ միւսը անսահման, մէկը տարակոյտով խառն, իսկ միւսը անխառնակելի և անտարակուսանելի: Մէկը ստացական՝ իսկ միւսը ինքնաբուխ, մէկը ենթակայ իսկ միւսը ինքնագործօն:

Մարդ արարածի մտածողութեան և դատողութեան սխալանքը կը կայանայ, ընդհանրապէս, թուանշաններու սխալ դրութեան մէջ: Մարդկութեան բազմապատկութեան աղիւսակին մէջ ան կը սիրէ դնել թիւ մէկը, թիւ երկուսին տեղ (այսինքն՝ ստացականը փոխան ինքնաբուխի): Յիսուս Քրիստոս մեզմէ *կոյր հաւատ*՝ և կոյր հնազանդութիւն չի պահանջեր: Որպէս անասուն մեր քերնին սանձ անցնելով Ի՛ր ուզած տեղը մեզ չի բջեր: Ան կ'ուզէ ցոյց տալ մեր հաւատին վաւերական խարիսխը սուեալներով ու փաստերով, բայց նախ կ'ուզէ որ *հաւատա՛նք* և վստահինք Իրեն: Ճանչնա՛նք Ձինք որպէս Տէր և Արարիչ: Ան ըսաւ հողաշէն մարմնի մէջ տատանող Մարթային.

**«Զրսի՞ քեզի, որ եթէ հաւատաս՝  
Աստուծոյ փառքը պիտի տեսնես»:**

*«Պիտի տեսնես Աստուծոյ փառքը»*, հաւատիդ ապացոյցը պիտի դառնայ ջօջափելի: Բայց նախ *հաւատալո՛ւ* ես: Նախ *վերցուր քորը գերեզմանէն՝* տարակոյսներդ, որոնք արգելք են հաւատիդ վերցուր, որպէսզի կենսամտորոգ Լոյսը թափանցէ հոգւոյդ խորը և հաւատի սերմեր ծլարձակուին սրտիդ մէջ:

Երբ քորը վերցուցին գերեզմանի մուտքէն, Յիսուս դարձաւ Կենարար Կամուրջը: Ոչ մետաղեայ կամ քարէ կամուրջ, այլ յոյսի և հաղորդութեան Կամուրջ: Ան կանգնեցաւ իբրեւ կեանքի՛ կամուրջը մահուան և յոյսի, միջեւ, ողբերգութեան և Աստուծոյ փառքին միջեւ: Երկու հազար տարիներէ ի վեր, մարդկային ողբերգութիւնը ապրած Յիսուս այսօր ալ կը կրկնէ Իր հրաւերը քեզի և ինձի.

**«Զրսի՞ քեզի, որ եթէ հաւատաս՝  
Աստուծոյ փառքը պիտի տեսնես»:**

Հաւատալը, մարդուն շնորհուած մոզական գաւազանն է: Հաւատալը՝ հաւատն է Անհաւատալիին, ջերմօրէն ու խանդավառօրէն: Վերլուծութեան և «բանականութեան» օրէնքներու չենթարկուող ամենամեծ երեւոյթներէն մէկը *հաւատա՛լն* է, հաւատա՛լ Աստուծոյ գոյութեան և Անոր Հայրութեան Քրիստոնեայի մը դերը, աջխարհի մէջ՝ *հաւատայ, տատայիչ և տպանել* է:

**«Անհաւատ մի՛ ըլլար, այլ՝ հաւատացեալ»:**

Վերոյիշեալ բառերը ծանրաբեռնուած բառեր են, բայց ոչ յանդիմանութեամբ, այլ Գողգոթայի՝ վշտին սրբութեամբ և սիրոյ ու գթութեան մելանուջ ձայնով: Վարդապետ և աշակերտ կայնած են դէմ դիմաց, մին ամօթահար...իսկ Վարդապետը արցունքախօս...:

Երեւ տարիներ Նազովրեցի Յիսուս՝ ազգին յոյսը և միասու-  
լածութեան շօշափելի Մարմնացումը՝ կրթած ու դաստիարակած էր  
բազմահարիւր աշակերտներ, որոնց մէջէն ընտրած էր նաեւ 12 ընտիր  
հաւատարիմներու միաբանութիւն մը: Թովմաս աշակերտ ջրջագայած էր իր  
Վարդապետին հետ բոլոր Հրեաստանի գիւղերը: Ականատես եղած էր  
հրաշագործ Մարգարէին ֆարոգներուն, բժշկութիւններուն, հինգ հազար  
հոգին հինգ նկանակով կերակրելուն, որուն սպասաւորութեան ի՛նք ալ բերած  
էր բաժին մը: Մասնակցած էր ֆարոգչութեան և աւետարանչական արջաւի  
ուրիշ ընկերոջ մը հետ: Իմացած էր Տիրոջ Պայծառակերպութեան  
հրաշալիքը: Յիսուս խոնարհած էր Թովմասի ոտներուն առջեւ և լուացած  
անոր ցեխոտ ոտները: Բաժնեկցած էր անմահարար Սուրբ Գինիին և Տիրոջ  
Մարմնին վերջին Ընթրիքին:

Խաչելութեան սեւ օրը, թէեւ պատուեցաւ տաճարին վարագոյրը  
բացայայտելու ճանապարհը դէպի Աստուած ճջմարիտը, սակայն տարակոյսի և  
անհաւատութեան վարագոյր մը ծածկեց աշակերտներու հոգին: Խաչելու-  
թիւնը և իրենց Վարդապետի նախատեսութիւնները, որոնք յաճախ իմացած  
էին, բնաւ ներգործութիւն մը, ըմբռնումի ազդեցութիւն մը չէին գործած  
աշակերտներուն վրայ: Իրենց համար Յիսուս Վարդապետ պէտք էր,  
անպարտելի Ախոյեանը դարձար, որ պիտի ազատագրէր զիրենք հրոմէական  
տիրապետութենէն...:

Գողգոթային Սուրբ Խաչելութիւնը փջրած ու խորտակած էր զիրենք:  
Անոնց յոյսը ոչ միայն ի դերեւ ելած էր, այլ յաւէտ կորսուած կը կարծուէր  
որպէս երազ և իրենք զիրենք ամօթահար կը զգային իրենց բարեկամներուն  
հով, որոնք զգուշացուցած էին զիրենք որ չհետեւին այդ շրջուն Զարոզիչին  
ու չ'ենթարկուին անոր սուտ խոստումներուն:

Զատկի արեգնաշող առաւօտը հնչեցուց Յարուցեալ Զրիստոսի  
յաղթանակը ու եթերին ալիքները սփռեցին մահուան ու գերեզմանին  
պարտութիւնը համայն տիեզերքի լսելիութեան: Յիսուս Զրիստոս դարձած էր  
կեանքի հեռանկարը և հորիզոնը որուն պիտի ձգտէր մարդկութիւնը իր  
զանազան լեզուներով, և այլազան դէմքերով: Վէպի մը ողնասիւնը կը  
կազմէր դժբախտ, ողբերգութիւնը, իսկ հաւատքի առանցքը, այսուհետեւ պիտի  
կազմէր Զրիստոսի Յաղթական և հրաշափառ Յարութիւնը:

Մեր Տէրը Իր Յարութեամբ չվերջացուց Իր առաքելութիւնը, այլ *սկսա՛ւ*

Իր նուիրական պատուիրակութեան: Աստուած յարութիւն տուած էր Իր Միածին Որդւոյն, այժմ Անմահ Որդին՝ Նազովրեցի Վարդապետը՝ Ի՛նք յարութիւն պիտի տայ աշակերտներու մահացած սրտերուն և հոգիներուն: Իր Յարութիւնը նախադուռն է յաղթութեան և չարին պարտութեան:

Առանձնաջնորմ աչֆերը, որոնք պիտի տեսնեն Յարուցեալ Տէրը առաջին անգամ, կը շնորհուին անոր, որ *կանուխէն* եկած է ու յարատւօրէն կը փնտռէ իր Տէրը: Մարիամ Մագլթաղեանացին է այդ երանելին: Պայծառակերպ ու ջուշանագեղ Յարուցեալը տեսնող աչֆերը, կնո՛ջ մը յաղթապա՛նծ աչֆերը կ'ըլլան: Աշակերտներուն աչֆերուն վրայ տատանող վարագոյր և վախի անստուգութիւն մը կայ: Երանելի՛ կանայք, որ դարձան ոահվիրան և փողահարը անգերագանցելի Յարութեան ակտումին:

Մահն ու գերեզմանը խորտակելէ յետոյ Իր Յարութեամբ, Յիսուս կ'երթայ գտնել անորոշութեան մէջ թաղուած Իր ոչխարները: Յարուցեալը զանոնք չի փնտռեր, Ան կը ճանչնայ անոնց հողայնութեան տկարութիւնը և կ'ուղղուի հոն, ուր անոնք ապահով կը զգան իրենք զիրենք կոպուած գոց դռան ետին: Յիսուս Զրիստոս յաղթահարած է նիւթը և թանձրացեալը: Անոր առջեւ միակ փակուած դուռը՝ անձի մը *կամֆի՛ն* դուռն է: Ան կը բանայ ու կը մտնէ ամէն տեղ անարգել, բացի մարդու սրտէն ու հոգիէն ներս: Ան Ինքզինք չի՛ պարտադրեր: Նախ կը թակէ դուռը: Կը սպասէ որ դո՛ւն բանաս բու սիրտը և ներս հիւրընկալես Ձինք:

Ողորմելի աշակերտները յուսահատ ու անճրկած, հաւաքուած են իրարու բով անորոշ ապագայով և կը դիտեն մութ հորիզոն մը: Յանկարծ լուսեղէն երեւոյթի մը մէջէն կը տեսնեն իրենց մարմնացեալ Վարդապետը և կը լսեն Անոր ծանօթ ողջոյնը որ կ'ըսէ.

### ***«Խաղաղութի՛ն և եզիս»:***

Աշակերտները սահմուկած ու պապանձած չեն գիտեր ի՞նչ պատասխանել, ու քարացած միայն կը դիտեն իրենց անսպասելի Յարուցեալ Տէրը, ոմանք ամօթահար, իսկ ուրիշներ անորոշութեամբ: Յիսուս Իր սովորական և առաջնորդող հանգամանքով կը մօտենայ իւրաքանչիւրին և կ'ողջագուրէ զանոնք ջերմապէս մէկ առ մէկ ու ցոյց կու տայ Իր Ձեռներն ու Կողը: Այն Ձեռները որ օրհնած էին հացն ու գինին, որ բուժած էին կոյրերն ու բորոտները, այն Ձեռները որ աղօթած ու օրհնած էին մանուկները, վարձատրուեցան գամերու վերքերով և թջնամին ջանաց անշարժեցնել այդ Ձեռները խաչգամելով զանոնք կոշտ փայտի մը վրայ:

Յարուցեալ Զրիստոս *խաղաղութիւն* գովերգեց աշակերտներուն, որովհետեւ խաղաղարարները Աստուծոյ գործակիցներն են: Աշակերտները պարտ են դառնալ խաղաղարարներ որպէսզի սորվին պատերազմը ջահիլ

պատերազմէն առաջ: Անոնք խաղաղ ներթափանցումով, անձնուրացութեամբ և ծառայասիրութեամբ պիտի յեղաշրջէին աշխարհը ինչպէս որ ըրին: Հայ ազգին և անոր ճակատագրին մէջ անմոռանալի պիտի մնան Թադէոս և Բարթողիմէոս սուրբ առաքելներու նահատակութիւնը:

Յաղթական Յարուցեալին հոգեփոխիչ զօրութենէն զրկուած էր Թովմաս աշակերտը, որ հեռու կը մնար աշակերտներու միաբանութենէն և հաղորդութենէն: Հաւանական է որ ինքզինք գերադաս կը համարէր պարզ ձկնորս Գալիլեացիներէն:

Յաջորդող քանի մը օրերու մէջ խանդավառ աշակերտներ տարածեցին իրենց սիրելի և յաղթական Վարդապետին Յարութիւնը: Յիսուսը սիրողներ ցնծացին ու դիմաւորեցին իրենց յաղթական Տէրը, սակայն Թովմաս ցնցուեցաւ ու զիրենք ցնորամիտներ ու պատրանախաբ պատեհապաշտներ անուանեց: Ան ինքզինք զարգացած գիտնական կը համարէր: Ութ օր յետոյ աշակերտները դարձեալ միատեղ էին և Թովմաս ալ եկած էր ապացուցանելու անոնց, որ իրենց տեսածը պարզ երեւոյթ մը ըլլալու էր: Բուն վիճաբանութեան մը ընթացքին երբ աշակերտները իրենց բոլոր կարելին ըրին փաստելու համար թէ իրապէս տեսած են իրենց Յիսուս Վարդապետը, Թովմաս տակաւին կը յամարէր թէ մինչեւ որ մատներով չջօջափէ և աչքերով չտեսնէ Յարուցեալ Տէրը, չի կրնար հաւատալ...:

Վերոյիջեալ վերջին բառը հազիւ արտասանած, Թովմաս ականատես եղաւ լուսեղէն ճառագայթի մը որուն ընդմէջէն Յարուցեալ Քրիստոս կրկին սուաւ յաղթական ողջոյնը:

### ***«Խաղաղութիւն ձեզի»:***

Ողորմելի Թովմաս, սմբած, ամօթահար ու պարտասած չի կրցաւ նոյնիսկ կակազել: Թովմաս իր բոլոր սոփեստութեամբ և յաւակնոտութեամբ ուներ նաեւ ոսկեայ բարեմասնութիւն մը՝ պաշտամունքային սէր և աննենգ հաւատարմութիւն Վարդապետ Յիսուսի հանդէպ: Յիսուս ճանչած էր Թովմասի արժանիքը ու կը սիրէր զայն: Ան գիտէր իւրաքանչիւր աշակերտին թերութիւնը ու ներողամիտ էր անոնց: Ան գիտէր թէ մարդ տկամայ կը մեղանչէ իր մղումներէն տարուած և առանց գերբնական ներջնչումի, մարդ հաւասար է անքան կենդանիներու: Հետեւաբար Լուսեղէն Յարուցեալը խոստովանանք չի պահանջեր, Ի՛նք կ'առնէ առաջին քայլը ու լուրթեան մատնուած Թովմասին դառնալով կ'ըսէ.

***«Բե՛ր քու մտաներդ և դի՛ր այստեղ ու տե՛ս իմ  
ձեռ՛ներս, և բե՛ր քու ձեռ՛դ ու մխրճէ՛ իմ կողիս  
մէջ, անհաւատ մի՛ ըլլար, այլ հաւատացեալ»:***

Խեղճ Թովմաս, մէյ մը կը նայի իր ընկերներուն, մէյ մը կը նայի Փրկարար Յարուցեալին ու կակազելով հագիւ լսելի ձայնով մը կ'ըսէ.

**«Տէ՛ր իմ և Աստուած իմ»:**

Թովմաս ինքզինքին համար չէ՛ որ յաւկնոտեցաւ, ան իր անձին համար չէ՛ որ ապացոյց և փաստարկութիւններ պահանջեց, ան միայնակ չէ՛ կանգնած ժամանակի և տարածութեան մէջ որպէս սոփեստ մը: Թովմաս կը ներկայացնէ բոլոր պատմակերտ ժամանակներու թերահաւատութեան ոգին, տարակոյսի և երկմտութեան ոգին, տատանումի ու վարանումի հոգին:

Զգուշանանք դատելէ Թովմաս աջակերտը: Ինչո՞ւ: Արովհետեւ յաղթապսակ Յարուցեալն անգամ **չդատեց** իր աջակերտը, նոյնիսկ յանդիմանական խօսք մը չ'արտասանեց անոր: Յիսուս Քրիստոս **սիրոյ** ներողամտութեամբ սրբագործեց Թովմասի թերահաւատութիւնը:

Թովմաս աջակերտին թերահաւատութիւնը պատճառ եղաւ, որ երանելիներու Տոմարակալը շարք մը եւս աւելցնէ երանելիներու ցանկին վրայ: Յիսուս Քրիստոս "Լերան Քարոզի" ընթացքին յիշած երանելիներու ցանկին վրայ աւելցուց նաեւ.

**«Անոր համար որ դուն զիս տեսար և հաւատացիր,  
երանի՛ անոնց որ չեն տեսած ու կը հաւատան»:**

Ո՛չ դիպուած էր ու ոչ պատահականութիւն, որ Թովմաս թերահաւատեցաւ: Անոր հաւատքի տատանումը և կասկածը մեր հոգեկան լուսաւորումին համար տեղի ունեցաւ, որ դարերու ընդմէջէն զանգէ Յաղթականին ձայնը և պատագամէ մեզմէ իւրաքանչիւրին ըսելով.

**«Աի՛ր ըլլար անհաւատ, այլ հաւատացեալ»:**

Մեզի կը մնայ մերժել կամ միացնել մեր խոստովանանքը և ըսել.

**«Տէ՛ր իմ և Աստուած իմ»**

**«Ո՛վ մարդիկ, որ անմիտ և թուլա-  
սիրտ էք՝ հաւատալու»--Ղուկ. ԻԴ. 20:**

Յիսուս Քրիստոսի մօտեցումը դէպի մարդ արարած եղած է բաղցրութեամբ և հաճոյակատարութեամբ: Յիսուս Քրիստոսի խիստ արտայայտութիւնները բոլորն ալ ուղղուած են, ընդհանրապէս, կեղծաւորներու և իրենք զիրենք բարեպաշտ ձեւացնողներու: Այս չի նշանակեր սակայն, թէ

Ան բնաւ խիստ արտայայտութիւններ չէ ունեցած, չէ՛ սաստած և չէ յանդիմանած Իր աշակերտները: Յիսուս Քրիստոս՝ Իր առաքելութեան ջրջանին գործածեց ամէն միջոց յառաջ տանելու համար ճշմարտութիւնը, իրաւունքը և արդարութիւնը:

Յիսուսի շատ սիրելի Պետրոս աշակերտ, որ դաւանեցաւ Ջիմք որպէս կենդանի Աստուծոյ Որդին, և արժանացաւ "Վեմ" մակդիրին ու երկնքի արքայութեան բանալիները իրեն յանձնուեցաւ, բիջ յետոյ, հազիւ ժամ մը անցած, Յիսուս զայն *սատոնց* ու կոչեց *Մատանայ*: ըսելով:

***«Ետի՛ս գնայ, Մատանայ, դու ն գայթակ-  
դութիւն ես ինձի համար»--Մատթ. ԺԶ. 23:***

Յիսուս կը սիրէ բոլոր մարդիկը աննկատօրէն անոնց գոյնին և ցեղապատկանելութեան, սակայն ալ աւելի Անիկա ջատագովն է ճշմարտութեան, իրաւունքի և արդարութեան: Անոր խստութեան և յանդիմանութեան մէջ իսկ, ակնառու է Անոր սերը և բաղցրութիւնը հանդէպ մեղապարտին և զանցառուին:

Յարուցեալ և անպարտելի Քրիստոս, թափուր գերեզմանին առջեւ յայտնուեցաւ Մարիամ Մագթաղենացիին, որ աւետեց Յարուցեալին պատգամները Անոր աշակերտներուն: Այդ նոյն օրը երկու աշակերտներ (ոչ տասներկուսէն) կ'երթային էմմաուս որ երուսաղէմէ ծ մղոն հեռու գիւղ մըն էր: Ըստ Արեւելեան սովորութեան, խօսակցութիւն մը կամ վէճ մը բարձրաձայն տեղի կ'ունենար: Կարծիքներու և գաղափարներու հակադրութիւնը կարելի էր նշմարել նոյնիսկ հեռուէն, որովհետեւ խօսակցութեան ընթացքին կը գործածէին թէ՛ իրենց ձեռքերը և թէ՛ մարմնի շարժուձեւերը:

Յարուցեալ Յիսուս՝ Իր ջախջախիչ յաղթանակը փոխանակ ապացուցանելու Պիղատոսի և Հերովդէսի առջեւ, կը բալէ հետիոտն դէպի էմմաուս գիւղը յայտնելու Ինքզինք Իր պարզ աշակերտներուն, բաջալերելու ու մխիթարելու անոնց հոգին: Յիսուս Ի՛նք կը մօտենայ, Ի՛նք կ'աննէ սկզբնական բայը և կը հարցնէ անոնց թէ ինչո՞ւ այդքան կրակոտ խօսակցութեան և բանավէճի մէջ են:

Կղեովպաս որուն գլուխը արդէն տաքցած էր վիճաբանութենէ, կոշտօրէն կը պատասխանէ այս Օտարական ճամբորդին, ըսելով. *«Երուսաղէմի մէջ*

*միայն որ՞ն է ես որ չեմ իմացած թէ ինչեր կատարուեցան այնտեղ այս օրերուս»:* Յիսուս որ լաւ կը ճանչնար Իր հարազատ աշակերտները և գիտէր իւրաքանչիւրին բնաւորութիւնը, Ինք ալ մասնակից կ'ըլլայ անոնց վիճաբանութեան: Յիսուս Քրիստոս չափազանց զոհ է որ աշակերտները հետաքրքիր են իրենց Վարդապետին պատահածներով և Ինք մոռցուած Մարգարէ մը չէ՛ տապանաբարի մը ետին: Հոգ չէ որ Իրեն հետ կոշտութամբ կը վերաբերին: Ան ունի զօրութիւնը և հոգին փոխակերպելու այդ կոշտ

կարծուածները անձնուրաց, անձնազոհ աստուածաբարբառ առաքեալներու:  
Կղէովպաս աշակերտին բարձրադաղակ խօսակցութիւնը կը հասնի իր  
գագաթնակետին երբ ան կը յայտնէ իր Թերահաւատութիւնը և կ'ըսէ.

***«Ետեւ մեզ զարմացուցին մեր մէջէն Բանի մը կիներ, որոնք  
տուօտուն կանուխ գերեզման գացած էին և տնոր մարմինը  
չէին գտած, տնոնք եկան և ըսին թէ հրեշտակներու տեսիլք  
մըն ալ տեսած էին, որոնք Յիսուսի մասին կ'ըսէին թէ կեն-  
դանի է ան: Ապա մեզմէ ոմանք ալ գերեզման գացին և  
գտան այնպէս, ինչպէս ըսած էին կիները... Մենք կ'ակնաւի-  
ննք որ Ա՛ն ցիտի փրկէր Իսրայէլը:--Ղուկ. ԻԴ. 12-24:***

Մինչեւ այս կէտը, Յարուցեալ Յիսուս մտիկ ըրաւ խօսնակ Կղէովպասի  
հոգւոյն արտայայտութիւնը և խօսելու կոչումութիւնը: Ան գիտէր Իր  
աշակերտներուն հոգեկան անարատութիւնը, անկեղծութիւնը և նուիրումը:

Վայրկեան մը Յիսուս կանգ առաւ, դարձաւ երկու աշակերտներուն ու  
նայեցաւ անոնց աչքերուն, խորունկէն դիտեց անոնց անուշ աչքերը և կարծես  
ուզեց ողջագուրել զանոնք և յայտնել Ինքզինքը: Բայց... որոշեց նախ  
արթննել զանոնք իրենց հոգեմտաւոր Բունէն և *ազգայնամուլ* նախապա-  
շարուէն: Զանոնք երկար մտիկ ընելէ վերջ, Յիսուս Ի՛նք սկսաւ խօսիլ և  
ըսաւ անոնց.

***«Ո՛վ մարդիկ, որ տնմիտ ու թուլասիրտ էք՝ հաւատալու հա-  
մար բոլոր այն բաներուն, զոր խօսեցան մարգարէները...: Եւ  
սկսելով Մովսէսէն ու բոլոր մարգարէներէն կը բացատրէր  
տնոնց այն ամէնը, ինչ որ գրուած էր իր մասին»:***

Յիսուս չի՛ վիճիր, այլ՝ կը *բացատրէ*: Անորոշութիւնը, կիրքի  
ջփոթութեամբ, անլի եւս չ'աղօտէր: Անոր խօսակցութիւնը ոչ միայն հաճելի  
է, այլ ենթակային հորիզոնը կը լայնցնէ, միտքը կը բանայ և հոգին կը  
լուսաւորէ: Թերահաւատները և անհաւատութեան յորձանուտը ինկածները կը  
ցնցէ. *«Ո՛վ անմիտներ և թուլասիրտներ»* կոչելով զանոնք: Առաջին հարուածը  
զօրաւոր է, բայց ո՛չ *մահացու*, առաջին հարուածը՝ խիստ է և յանդիմանական,  
սակայն ո՛չ *անարգական*:

Յիսուս Զրիստոս, սկիզբը կրնայ օտարական մը ձեւանալ, անգէտ մը  
կարծուիլ, սակայն Անոր Անձնաւորութիւնը հմայիչ է ու չոգին՝ առինքնա՛նող:  
Անոր ընկերակցութեան մէջ կենսազգացութիւն կայ և Անոր ներկայութեան՝  
գոհունակութիւն և յագեցում: Այնքա՛ն հետաքրքրական է Յիսուսի  
խօսակցութիւնը, որ ճամբու յոգնութիւնը չեն զգացած երկու աշակերտները և  
հասած են իրենց գիւղը և տան ծիսնելոյզի մուխը արդէն կ'երեւի: Այս

Օտարականին շարժուձեւերը, նայուածքը և խօսակցութեան ձայնը իրենց ծանօթ կը թուի, կը հրապուրէ գիրենք ու չեն ուզեր բաժնուիլ Անոր ընկերակցութենէն: Կաղաչեն Անոր որ իրենց բով գիշերէ այդ օր, ու կ'ըսեն.

***«Անք մօտ գիշերէ, որովհետեւ իրիկուն  
է և օրը տարածամած է»:***

Միրոյ անկեղծ հրաւեր մը, *Յիսուս երբեք չի մերժեր* ու ներս կը մտնէ անոնց հետ: Երբ կանայք սեղանը կը պատրաստեն և տան բոլոր անդամները ծալլապատիկ կը նստին ընթրելու, տան երիցագոյն անդամը կը խնդրէ այս զարմանալի, սակայն հիասքանչ և հմուտ Օտարականէն, որ Ան շնորհակալութեան աղօթքը մատուցանէ Աստուծոյ: Կեանքի Հաց բաշխող Աստուածորդին կ'առնէ հացը՝ կ'օրհնէ, կը կտրէ ու կը բաժնէ բոլորին, ճաշակեացուքը ըսելէն յետոյ:

Երբ հացին պատանները կը դաչին սեղանին շուրջ բոլորուածներու ձեռներուն, անոնց աչքերը կը բացուին ու կը ճանչնան թէ այդ Օտարականը ուրիշ մէկը չէր, այլ իրենց սիրելի Վարդապետը յարութիւն առած: Հագիւ կը ցտկեն իրենց նստած տեղէն ելլելու ու երկրպագելու Յարուցեալ Քրիստոսը ու յայտնելու իրենց սերն ու հաւատարմութիւնը, Յիսուս անոնց աչքէն աներեւոյթ կ'ըլլայ:

Յիսուս չ'անարգեր թերահաւատները և չի նուաստացներ անմիտները, այլ՝ Իրմով հետաքրքրուողներուն անպայման կը յայտնուի Ան: Ոչ միայն դարեր առաջ, այլ նոյնիսկ քաներորդ դարու մէջ ալ: Որքան ալ անմիտ ըլլան ու թուլասիրտ և թերահաւատ Ջինք սիրողները, Յիսուս կը յայտնէ Ինքզինք անոնց: Յիսուս Քրիստոս չյայտնեց Ինքզինք իմաստուն փարիսեցիներուն ոչ ալ մտաւորական դպիրներուն, այլ միայն Ջինք **սիրողներուն**, հոգ չէ որ կոշտ էին, անուս և կը պատկանէին բնութարական դասակարգին: Ան Իր հոգեկան գօրութեամբ, իւրաքանչիւր թերահաւատը, անմիտը և թուլասիրտը դարձուց անվեհեր առաքեալի, հոետոր Բարոզիչի և անվախ նահատակի:

Ով ընթերցող ի՛նչ դասակարգի ալ պատկանիս, Ան կարող է կերպարանափոխել և շողախել քեզ Իր տիպարին ու շնորհել քեզ յաւերժական կեանք:

**Կ'ուզե՞ս որ բու մօտդ գիշերէ Ան այս իրիկուն:**  
***«Թէպէտ և ան այնքան նշաններ ըրած էր անոնց  
առջեւ, բայց անոնք չէին հաւատար իրեն»:***

Հաւատալու համար միայն միտք չի բաւեր, այլ հոգեկա՛ն տեսութիւնն

ալ հարկաւոր է բիւրեղացնելու հաւատացեալին հոգեմտաւոր արժէքները:

Ամենէն կարեւոր արժանիքը ո՛չ տաղանդն է, ոչ ալ բաշուլթիւնը, այլ **հաւատքը**: Հաւատքը ոչ թէ հանգրուան մը ըլլալու է, այլ **ուղի** մը: Հաւատքը այն արարքն է հոգիին ու կամբին, որուն մէջ կամ միջոցով բանականութիւնը կը հասնի գերացնածութեան որ իրմէ աւելի բարձր է և անդին: Ճանչցուած գիտութիւնը կամ հմտութիւնը՝ միայն **երեւցած** իրականութիւնն է: Ինչո՞ւ չի հաւատալ իրականութիւններու, որոնք մեր հասողութենէն դուրս և ըմբռնելու կարողութենէն անդին են: Հաւատալը՝ հաւատքն է Անհաւատալիին, ջերմօրէն ու խանդավառօրէն: Հաւատքը մարդու բնութեան, էութեան մէջ շարուած անթօթափելի զգացում մըն է:

Փարիսեցիք և դպիրներ թէև հիացան Յիսուս նազովրեցիին ու սեփանչացան Անոր հրաշագործ զօրութեան, սակայն իրենց սրտին մէջ ատեցին Զինք թշնամական անարգանքով և չխոնարհեցուցին իրենց սեգ կամքը հաւատալու ճշմարտութեան:

Վերոյիշեալ օրինապաշտ և պահպանողական փարիսեցիներու մէջ, Աստուած գտաւ աննենգ և մաքուր սիրտ մը, հոգ չէ, որ մոլորած էր և կոյր: Այս փարիսեցի հակաբրիստոս բարեպաշտը՝ հանդիպեցաւ փառաւորեալ Յիսուս Բրիստոսի՝ Դամասկոսի մուտքին: Ո՛չ որպէս Օտարական մը ինչպէս Էմմաուսի ճամբորդներուն, այլ հրեղէն ու կայծակնափայլ Յարուցեալ մը: Այս հանդիպումէն յետոյ, Պօղոս անդրադարձաւ իր սխալանքին, ու զոչումի արցունքներով ծնրադիր, պապանցած ու կուրացած կու լար ու չկրցաւ նոյնիսկ կակազելով բառ մը խօսիլ:

Բարեգութ ու ողորմած Բրիստոս, Ի՛նք մօտեցաւ Պօղոսի և բաղքաշունչ ձայնով մը ըսաւ.

**«Աստու՛ղ, Աստու՛ղ, ինչո՛ւ կը հալածես զիս ... Ես Յիսուսն եմ  
զոր դու ն կը հալածես: Ոտքի՛ ելիր և այդ բաղաբը մօտիր, ու  
Բեզի պիտի ըսուի թէ ի՛նչ պէտք է ընես»--Գործք. Թ. 5-7:**

Որքա՞ն բացայայտ է, որ Յիսուսը հալածող և հաւատացեալները սպաննող Պօղոս, փոխանակ դատապարտութիւն և պատիժ ստանալու Բրիստոսէ, կ'ընտրուի որպէս առաքեալ ու Բարոզիչ Աւետարանի տարածման: Պօղոսի դարձը ցոյց կու տայ աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնը հանդէպ տառապակոծ աշխարհի և մոլորած ու անորոշութեան խաւարին մէջ խարխափող հաւատացեալներու շնորհած ուղղութիւնը և առաջնորդութիւնը: Աստուած *կամագուրկներ*, չի՛ փնտեր, այլ առ Աստուած հնազանդութեան և *Անոր կամքին* ընդառաջումի ոգի՛ն ունեցողներ կը ջանայ գտնել:

Մեր աչքերուն տիտան և հզօր երեւցող առաքեալներն անգամ ունէին իրենց սկարութիւնները և թուլացումները: մեզ կանչող Աստուած Ճշմարիտը,

մարդկայինը՝ աստուածայինի կը վերածէ, կաւը՝ լոյսի և տկարութիւնը՝ զօրութեան: Պօղոս Առաքեալ որ քարոզած էր աշխարհի արքաներու ներկայութեան և Աթէնքի Արիստոտելի իմաստասէրներու հաւաքոյթին ու պանծացուցած իր Տէրն ու Փրկիչ Քրիստոսը, կ'ըսէ.

*«Կամեցողութիւնը կայ իմ մէջս, իսկ բարին կատարելը՝ ոչ. որովհետեւ ոչ թէ կ'ընեմ բարին զոր կ'ուզեմ, այլ կ'ընեմ չարը զոր չեմ ուզեր»--* Հռոմ. Է. 18-19:

Մտքի և հոգիի տիտան Պօղոս որ բժշկեց հիւանդները և հազարաւորները դարձուց Մատանայի իշխանութենէ Յիսուս Քրիստոսի փրկարար ազատութեան, այս մտքի և կամքի անվեհե՛ր առաքեալը կը խոստովանի իր տկարութիւնը: Ան կը խոստովանի իր տկարութիւնը, ո՛չ թէ արդարացնելու և քաջալերելու հաւատացեալները որ տկարանան, այլ ցոյց կու տայ, կ'ապացուցանե՛ անոնց որ մենք ալ, ո՛չ թէ նայինք մեր տկարութիւններուն, այլ Յիսուս Քրիստոսի անսպառ ողորմութեան, ինչպէս լոյսի երգիչ Ներսէս Ծնորհալի եւս կ'ըսէ.

**«Եւ ողորմեա՛ քու արարածոց և ինձ՝ բազմամեղիս»:**

Առաքեալներ և սուրբեր իրագործեցին իրենց պարտականութիւնը հաւատարմօրէն ու ոմանք ալ *արիւ նազի՛ր* արձանագրութեամբ: Ո՛չ որովհետեւ կատարեալ սուրբեր էին, այլ՝ անոնք յաղթեցին ու տիրեցին չարին, որովհետեւ անոնց պայքարի և մարտնչումի զօրութիւնը եկաւ իրենց մարմնի տկարութենէն: Այլ խօսքով, անոնք գիտնալով, ինչպէս Պօղոս առաքեալ կը խոստովանի, որ իրենք մարմնապէս տկարներ ըլլալնուն համար, իրենց յոյսը և կամքը *տրամադրեցին* Աստուծոյ կամքին և Անոր առաջնորդութեան:

Տիգրանի գնդանին մէջ Վարդան Մամիկոնեան ալ ուրացաւ զԱստուած ճշմարիտը երբ մարմինը՝ մարդկային հողայնութիւնը, իր տիրապետութեան հովանին տարածեց անոնց հոգւոյն վրայ: Սակայն երբ պայքարի փողը հնչեց. *«Վասն հաւատքի և վասն հայրենեաց»*, քաջն Վարդան՝ իր ուրացութիւնը փոխանակ արցունքով սրբագործելու, արիւնո՛վ մաքրագործեց: Ինչո՞ւ, որովհետեւ ինչ որ արիւնով կը գրուի, դարերո՛ւ համար է ու ոչ առժամանակեայ: "Անլուելի" Զանգակատան կանչը ներկայ սերունդին կ'ըսէ.

**«Լաւագոյնն է ջանալ կատարելութեան ու ճիշտնիլ, քան թէ ձգտիլ վատին, ու հասնիլ»:**

Տարակոյսն ու թերահաւատութիւնը պիտի հալածեն մեզ մինչեւ մահ: Պիտի ամպոտի մեր մտածումի երկնակամարը, սակայն անոնց վերեւ կայ ու

կը ցոլափայլի Արդարութեան Արեգակը: Մեր խոյանքը պարտի ըլլալ քարձրանալ աւելի վեր Քան տարակոյսի և կասկածի ամպերը, տեսնելու համար Անստուեր Լոյսը:

Հայ ազգը ողջունեց Յիսուս Զրիստոսի հաւատքը 301-ին: Հաւատակերտ Ա. Էջմիածին, աննկուն հաւատաւորի կամքով և ամուր կտոջած իր կոչման, ամրապնդեց հայ ազգը Յիսուսի հաւատքին անհամեմատ հորիզոնով և խորացումով:

Արաքական արջաւանքները և Օսմանեան կոր սուրը չկրցան խախտել հայ ժողովուրդին հաւատքը, որովհետեւ Ա. Էջմիածնայ սուրբեր, հաւատքը դարձուցած էին միս և արիւն, զօրութիւն և կեանք, ներշնչում ու գոյատեւման ազդակ: Համայնավարութիւնը՝ իր պողպատէ սպառազինութեամբ, հաւատուրաց գրագէտներով և հաւատագուրկ արուեստագէտներով չի կրցաւ նուաճել անգէն հայ ժողովուրդին հաւատքը: Հաւատքի նուիրեալներ, ինչ անուն և պիտակ ալ ունեցած ըլլան, կը պատկանին համընդահանուր հայութեան:

Յիսուս Զրիստոս գերագոյն արժանիքով գնահատեց մարդ արարածին հաւատքը, նոյնիսկ եթէ ան *«Մանանէնածից»* փոքրիկ հաւատք մը ըլլար: Աստուած, մարդուն մէջ, ինչո՞ւ հաւատք կը փնտռէ: Ան ինչո՞ւ գերարժեւորութիւն կու տայ հաւատքի: Ինչո՞ւ հրաջքները պայմանաւորուած են հաւատքով:

Գիտութիւն, կարողութիւն, գեղեցկութիւն և հարստութիւն, Աստուած կրնայ տալ մարդ արարածին: Արուեստն ու գիտութիւնը ո՛չ բաւարար են ու ո՛չ ալ կրնան փոխարինել հաւատքը: Հաւատքը այն գերբնական, անջօջափելի և անտեսանելի զօրութիւնն է, որ մարդ արարած ի՛նք պարտ է ծննդագործել, ծլարձակել ու մատուցանել Աստուծոյ: Եթէ Աստուած հաւատք պարգեւէ մարդու, այդ ջնորհը ենթակային հաւատքը չի՛ կրնար նկատուիլ: Հաւատքը մարդու ազատ կամքին, սիրոյն և զոհողութեան հետ շաղախուած *«նէ նակատութիւնն»* է, որ մի միայն մարդ արարած ի՛նք կրնայ ծնիլ, արտադրել կամ ստեղծել: Աստուածային պարգեւը կը կայանայ, մարդուն մէջ, հաւատալ կարենալու *«կարելիութեան»* ջնորհը միայն, սակայն *«կամենալը»* մարդ ի՛նք պարտ է որոջել:

Հաւատքը, ենթական ի՛նք պարտ է յղանալ և ծնիլ: Խաչին վրայ աւազակին հոգւոյն մէջ ծլարձակուած հաւատքի նշոյլն իսկ գնահատուեցաւ Յիսուսի կողմէն: Ան մոռցաւ Իր ցաւերը երբ տեսաւ հաւատքին ընձիւղիլը մեղաւորի մը հոգւոյն մէջ և արժանացուց զայն դրախտագնացներու խումբին:

Մարդոց համար հաւատքը կրնայ ցնորական թուիլ, բայց Աստուծոյ համար այդ, հիւլէական ուումքէ մը աւելի ուժանակային է: Մարդեղեալ աստուածայայտնութիւնը ըսաւ.

**«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մանանէիսի հատիկի չափ**

**հաւատք ու նենտք, այս լերան պիտի ըսէ՝ ասկէ հո՛ն փոխադրուէ, և պիտի տեղափոխուի, և որեւէ բան ձեզի համար անկարելի պիտի չ'ըլլայ»--Մատթ. ԺԷ. 19:**

Հաւատք ու նուիրում հաւատացածիդ, ոչ պարագայական է և ոչ ալ շահադիտական, այլ *իւժնաբույս*, անձին եութեան և իսկութեան արտայայտչական դիմագիծն է: Հաւատքը ոչ միայն ուժականութիւն մըն է, այլ՝ *անկյն նաշարձ* կերտող անդիմադրելի մղում մը, որ կը տեսնենք Ձակֆէոս մահահաւաքի դարձին, նուիրումին ու փրկութեան մէջ:

Հրաշալի Յարութեան ամենայատկանշական դէպքերը, Յարուցեալ Բրիստոսի այցելութիւններն էին տարակուսող, թերահաւատ և թուլասիրտ աշակերտներուն, տալու յարութիւն անոնց հոգեպէս մահացած սրտերուն, որովհետեւ հոն կար *պլպլացող* հաւատքի կայծեր: Չկարծենք որ Յիսուսի աշակերտները իրենց կոչումին նուիրեալ անձնագոհ, աննկուն հաւատաւորի, անմեռ յոյսի և անսասան հաւատքի տէր մարդիկ էին նախ քան Յիսուս Բրիստոսի Յարութիւնը: Էմմաուսի ճամբուն վրայի աշակերտներուն, Յիսուս ըսաւ. *«Անվ մարդիկ, որ անհիտ և թուլասիրտ է՞ հաւատալու»:* Թովմաս աշակերտին ըսաւ. *«Անհաւատ մի ըլլար, այլ՝ հաւատացեալ»:*

Յիսուս Բրիստոս այսպիսի՝ աշակերտներու հետ գործ ունեցաւ, սակայն գնահատեց և վերարժեւորեց զանոնք, որովհետեւ անոնք *հաւատք ունէին:* Յիսուսի փնտրած գերագոյն ազդակը (հաւատք) ծլարձակուած էր անոնց անխարդախ հոգւոյն մէջ: Մնացեալ գործօն կարողութիւնները Ա՛ն կրնար պարգեւել անոնց, կարեւորը սակայն, ***ու նենտ՛չ*** էր Իրե՛ն հաւատացողներ թջնամի (չարին) պետութեանը մէջ:

Այս փոքրիկ մանանեխածիլ հաւատք ունեցող աշակերտները, երկնաւոր Պատգամաւորը դարձուց անձնագոհ և իրենց կոչումին բարձրօրէն գիտակից աննկուն հաւատաւորներու, որոնք առանց ընկրկելու հուրի և սուրի առջեւ, անտրտունջ սուին իրենց պարանոցները: Որովհետեւ Յարուցեալը փչեց անոնց վրայ Սուրբ Հոգին ու ըսաւ անոնց.

***«Խաղաղութիւ՛ն ձեզի, ինչպէս որ իմ  
Հայրս զիս դրկեց, ես ալ ձեզ կը դրկեմ»:***

Զսաներորդ դարու մէջ ապրողներս ալ կորսնցուցած ենք շատ մը իրաւունքներ և բարեմասնութիւններ: Մեր խորան եկեղեցիները փլատակուած են: Անաստուածութեան և աշխարհականացած ունակութիւններ թափանցած են մեր հոգեկան ներքնասրահը: Աշխարհական գրաւչութիւններ կը հրապուրեն ու կը հմայեն մեզ: Մեր ոտքերը փոխանակ մաշեցնելու եկեղեցւոյ մուտքը, կը մաշեցնեն մարգահանդէսներու մուտքը: Սակայն ունի՛նք *հաւատքի կանթեղ* մը, որ թէպէտ չի լուսաւորեր մեր ճամբան, սակայն

չէ մարած, **կը պլպլայ:** Այս պլպլացող մանանեխածիլ հաւատքը մեր  
ամենակարեւոր արժանիքն է, որ Աստուած կը փնտռէ:

Տոյց տա՛նք մեր կանթեղը, աջտանակի՛ վրայ դնենք զայն ու ներս  
հրաւիրենք՝ անկապտելի և յարթական Յարուցեալը: Յիսուս Քրիստոս երբ փչէ  
Մուրք Հոգին մեր ալ վրայ, մեր կանթեղն ալ պիտի բոցավառի ու մեր  
կեանքերն ալ պիտի փոխակերպուին ու արարչատես հաւատքով և բարձրաթոյնիչ  
տեսութեամբ պիտի դիմենք դէպի կեանք, դէպի իսկական աշխատանք, դէպի  
լոյս առաւօտ հաւատքով, ծառայասիրութեամբ և լաւատեսութեամբ:

**Նոյեմբեր 8, 1993**

**Հալիպըրթըն, Գանատա**